



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հրատարակութիւն Գրքուրեանցի

ԿՈՄՍ Լ. Ն. ՏԱՎՏՈՅ

I

ԱՍՈՐԵՏՏԱՆԻ ԱՐՔԱՅ



ԵՍՍԵՐՀԵԴԻՑՆԸ

II

ԵՐԵՔ ՀԱՐՑ

Քարգանկ

Գրիգոր Շահրուղան



Թ Ի Յ Լ Ի Ս

891.71

S-80

1905 . 80 . 3 5

891.71

5-80

ար.

ԿՈՄՍ 1. Ն. ՏԱԼՍՈՅ

19 NOV 2011

I

ԱՄՈՐԵՍԱՆԻ ԱՐՔԱՅ



ԱՍՍԱՐՀԱԴԻՍԵԼ



II

ԵՐԵՐ ՀԱՐՑ



1002
6266

Թարգմանեց

Գրիգոր Շահրուղաղեան

Թ Ի Յ Լ Ի Ս

Ելեհրաւարձ սպարան «ՀԵՐԱՄԷՍ» ԸճԿ, Մաղաքեան փող. № 5

1905

(149)

1905 ՅՈՒ Բ 1

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՐԿԵՍ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՐԿԵՍ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՐԿԵՍ

Дозволено цензурою. Тифлисть, 8 октября 1905 г.

I

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՐԿԵՍ ԱՍՍԱՐՀԱԴԴՈՆԸ

Ասորեստանի արքայ Ասսարհադդոնը նւաճեց Լայիլիէ արքայի երկիրը, աւերեց ու այրեց բոլոր քաղաքները, բոլոր բնակիչներին տարագրեց, զօրքին ջարդեց, իսկ իրան, Լայիլիէ արքային փակեց փանդակում:

Ասսարհադդոն արքան զիշերը, պառկած անկողնում, միտք էր անում, թէ ի՞նչ կերպ մահացնի Լայիլիէին, երբ յանկարծ մի շուկ լսեց և աչքերը բանալով, տեսաւ մի ալեգարդ, երկարամորուս, հեղահայեաց ծերունու:

— Դու ևս ուզում Լայիլիէին մահացնել, հարցրեց ալևորը:

— Այո՛, պատասխանեց արքան: Միայն դեռ չեմ որոշել, թէ ի՞նչ կերպով մահացնեմ նրան:

— Բայց չէ՛ որ Լայիլիէն՝— դու ինքդ ես, ասաց ալևորը:

— Այդ սո՛ւտ է, ասաց արքան՝ ես— ես եմ, իսկ Լայիլիէն՝— Լայիլիէ:

— Դու և Լայիլիէն՝ մէկ էք, ասաց ալևորը: Քեզ միայն թւում է, որ դու Լայիլիէն չես, իսկ Լայիլիէն— դու:

— Ինչպէ՛ս թէ թւում է, ասաց արքան: Ահա՛ ես պառկած փափուկ անկողնում, շուրջս խոնարհ ստրուկներս ու ստրկուհիներս, իսկ փաղն էլ այսօրան պէս քէֆ կանեմ բարեկամներիս հետ, սինչդեռ Լայիլիէն թռչունի պէս փակած է փանդակում, իսկ վաղը լեզուն դուրս հա-

նաճ՝ ցցի վրայ կընստի և ոլորտի այնքան, մինչև որ սատկի և մարմինը գամբռները զիշատեն:

— Դու չես կարող նրա կեանքը ոչնչացնել, ասաց ալևորը:

— Ապա՛ այն 14,000 զօրականները, որոնց կոտորեցի և զիականերիցը արձան կանգնեցրի, ասաց արքան: Ես կենդանի եմ, իսկ նրանք չըկան: Ապա՛ ուրեմն, ես կարող եմ ոչնչացնել կեանքը:

— Դու ո՞րտեղից գիտես, թէ՛ նրանք չըկան:

— Որովհետև ես չեմ տեսնում նրանց: Մանավանդ որ նրանք տանջուում էին, իսկ ես ո՛չ: Նրանց վիճակը վատ էր, իսկ իմը լաւ:

— Այդ էլ թուում է քեզ: Դու ինքդ քեզ էիր տանջում և ո՛չ թէ՛ նրանց:

— Չեմ հասկանում, ասաց արքան:

— Ուզո՞ւմ ես հասկանալ:

— Ուզում եմ:

— Մտեցիր այստեղ, ասաց ալևորը, մատնանիշ անելով արքային ջրով լի աւազանը:

Արքան ոտքի ելաւ և մտեցաւ աւազանին:

— Հանւի՛ր և մտի՛ր աւազանը:

Ասսարհադդօնը կատարեց ալևորի պատւերը:

— Այժմ, հէնց որ սկսեմ ջուրը գլխիդ ածել, ասաց ալևորը, լցնելով ջրի թասը, ընկղմիր գլուխդ:

Ալևորը թեքեց թասը արքայի գլխին և արքան ընկղմեց:

Եւ հէնց որ Ասսարհադդօնն ընկղմեց, զգաց արդէն, որ ինքն Ասսարհադդօնը չէ, այլ ուրիշ մարդ: Եւ ահա՛ իրան այդ ուրիշ մարդն զգալով, նա տեսնում է իրան պառկած շքեղ անկողնում մի չքնաղ կնոջ հետ: Նա՛ երբէք չէր տեսել այդ կնոջը, բայց գիտէ, որ այդ իր կինն

է: Այս կինը տեղից ելնում է և ասում նրան՝ «Թանգագին ամուսինդ իմ Լայիլիէ, դու յոգնեցիր երեկան աշխատանքից, ուստի և սովորականից աւելի քնեցիր, բայց ես պահպանում եմ անդորրութիւնդ և չէի արթնացնում քեզ: Իսկ այժմ իշխանները սպասում են քեզ մեծ դահլիճում: Հագնելի՛ր և դուրս եկ նրանց ընդունելու»:

Եւ Ասսարհադդօնն այս խօսքերից իմանալով, որ ինքը Լայիլիէն է, ո՛չ թէ չը զարմացաւ այդ բանին, այլ զարմանում է թէ՛ ինչպէս ինքը մինչև այսօր այդ չէ՛ իմացել, վեր է կենում, հագնուում և գնում պալատի մեծ դահլիճը, ուր իշխանները նրան սպասում էին:

Իշխանները երկրպագելով ընդունում են իրնաց արքայ Լայիլիէին, ապա ոտքի ելնում և նրա հրամանով նստում առաջը, իսկ իշխաններից երիցագոյնը սկսում է խօսել, թէ՛ անկարելի է այլևս տանել Ասսարհադդօն չարասիրտ արքայի հասցրած բոլոր վիրաւորանքները և պէտք է պատերազմել նրա հետ: Բայց Լայիլիէն չէ համաձայնում այդ կարծիքին, այլ հրամայում է դեսպաններ ուղարկել Ասսարհադդօնի մօտ, որ նրա գուլթը շարժեն և արձակում է իշխաններին: Այնուհետև պատուաւոր մարդկանցից դեսպաններ է ընտրում և բացատրում նրանց մանրամասն, թէ ի՛նչ պիտի հաղորդեն Ասսարհադդօն արքային:

Աւարտելով այս գործերը, Ասսարհադդօնն իրան Լայիլիէ կարծելով՝ արշաւում է լեռները վայրի իշաներ որսալու: Որսը յաջող էր: Նա ինքը երկու էջ է սպանում և վերադառնալով տուն, քէֆ է անում իր բարեկամների հետ, զւարճանալով զերուհիների պարերով:

Հետեւեալ օրն, ըստ սովորականին, նա սրահն է ելնում, ո՛ւր սպասում են նրան խնդրատուները, մեղադրեալներն ու գանդատաւորները և վճռում է իրան ներ-

կայացրած գործերը: Աւարտելով այդ գործերը, նա դարձեալ գնում է իւր սիրելի զւարճալիք՝ որպիսի: Եւ այդ օրն էլ իրան յաջողում է սպանել մի պառաւ առիւծ և բռնել նրա երկու կորիւնը:

Որսից յետոյ նա կրկին կերուխում է անում բարեկամների հետ, զբաղւելով երաժշտութեամբ ու պարերով, իսկ գիշերն անցնում սիրելի կնոջ գրկում:

Այդպէս ապրում է նա օրեր ու շաբաթներ, սպասելով այն Աստարհադոն արքայի մօտ ուղարկած դեսպանների վերադարձին, որպիսի Աստարհադոնն առաջ ինքն էր:

Գեսպանները վերապառնում են միայն մի ամսից յետոյ՝ կարած քթերով ու ականջներով:

Աստարհադոն արքան հրամայում է ասել Լայիլիէին, թէ՛ ինչ որ իր ուղարկած դեսպաններին է արւած, նոյնն էլ իրան կանեն, եթէ նա իսկոյն և եթ չի ուղարկիլ իրան հասանելի ոսկու, արծաթի և մրտենու հարկը և անձամբ չի ներկայանալ երկրպագելու իրան:

Լայիլիէն, նախկին Աստարհադոնը, դարձեալ խորհուրդի է հրաւիրում իշխաններին և հարցնում, թէ ի՞նչ պիտի անել: Ամենքը միաբերան պնդում են, որ նախ քան Աստարհադոնի յարձակւելը, պէտք է շտապել անյապաղ պատերազմ յայտնել նրան: Թագաւորն համաձայնում է և զօրքի գլուխն անցնելով՝ գնում է պատերազմ, որը տևում է 7 օր: Ամեն օր արքան այցելում է զօրքին և խրախուսում իւր զօրականների քաջութիւնը: Ութերորդ օրը նրա զօրքը կանգնում է դէմ առ դէմ Աստարհադոնի զօրքին մի ընդարձակ հովտում: Գետի ափին Լայիլիէի զօրքը կուում է քաջութեամբ, բայց Լայիլիէն, որ առաջ Աստարհադոնն էր, տեսնում է որ թշնամիները մրջիւնի նման իջնում են լեռներից, ողողում հովիտները և յաղթում նրա զօրքին, ինքը նետ-

ւում է իւր կառքով ճակատամարտի դաշտը, ջարդում և խողխողում թշնամուն: Բայց Լայիլիէի զօրականներն հարիւրաւոր են, իսկ Աստարհադոնինը՝ հազարաւոր և Լայիլիէն զոռւմ է, որ ինքը վիրաւորւած է և որ արդէն գերի են տանում:

Ինն օր միւս գերիների հետ միասին գնում է շրջաթայած՝ Աստարհադոնի զօրականներով շրջապատւած: 10-րդ օրը բերում են Նինուէ և փակում վանդակում:

Լայիլիէն տանջւում է ո՛չ այնքան քաղցից ու վերքերից— ո՛րքան ամօթից ու անզօր զայրոյթից: Նա իրան անզօր է զոռւմ թշնամու հասցրած չարութեան վրէժխնդիր լինելու: Մի միակ բանը, ինչ որ նա կարող է, այդ այն է, որ առիթ չըտայ իր թշնամիներին խնդալու իր տանջանքները տեսնելիս և նա հաստատ վճռում է արիաբար, անտրտունջ տանել այն ամենը, ինչ որ գալու է իւր գլխին:

20 օր նստած է նա վանդակում, սպասելով մահւան պատժին: Նա տեսնում է, թէ ինչպէս զլխատելու են տանում իր ազգականներին ու բարեկտմներին, լսում է դատապարտեալների հառաչը, որոնցից ոմանց՝ ձեռքն ու ոտքն են կտրում, ոմանց կենդանի մորթեղերձ անում և չէ՛ արտայայտում ո՛չ վրդովմունք, ոչ ամսոսանք և ո՛չ սարսափ: Տեսնում է, ինչպէս կաւատները տանում են իր սիրելի կնոջը շրթայած: Նա զիտէ, որ նրան տանում են Աստարհադոնի հարձր դարձնելու: Եւ նա այս էլ տանում է անտրտունջ:

Բայց ահա՛ երկու դահիճ բացում են վանդակը և նրա ձեռքերը թիկունքից կաշկանդելով՝ մօտեցնում են արիւնով ողողած պատժատեղը: Լայիլիէն տեսնում է— սրածայր, արիւնոտ ցիցը, որի վրայից հէնց նոր քարշեցին

Լայիլիէի բարեկամի դիակը և գլխի է ընկնում, որ այդ ցիցը իւր մահւան համար են պատրաստել:

Նրա շորերը հանում են. Լայիլիէն սարսափում է, նայելով իր երբեմն ուժեղ զեղատեսիլ մարմնի այժմեան նիհարութեանը: Երկու դահլիճ բռնում են նրա նիհար սրբունքներից, բարձրացնում և ուզում են նստեցնել ցցի վրայ:

— Իսկոյն կըհասնի մահը, ոչնչացումն, մտածում է Լայիլիէն և մոռանալով իւր վճիռը՝ արիաբար, անտըրտունջ, անվրդով համբերելու մինչև վերջը, նա հեկեկալով աղերսում է խնայել իրան: Բայց լսող չըկայ:

«Բայց այդ անկարելի է, մտածում է նա, — ևս զուցէ քնած եմ: Այդ երա՞ղ է»: Եւ նա ջանք է անում զարթնելու: Ախար չէ՞ որ ես Լայիլիէն չեմ, ես Աստարհաղղօնն եմ, — մտածում է նա:

— Իու և՛ Լայիլիէն ես, դո՛ւ և Աստարհաղղօնը, — լսում է նա մի ինչ որ ձայն և զգում է, որ պատիժն ըսկսում է: Նա ճիչ է արձակում և նոյն ակնթարթում գլուխն աւազանից հանում: Ալեւորը կանգնած է գլխի վերը և թասից մնացած ջուրը ածում:

— Ո՛հ, ինչ սաստիկ տանջում էի ես: Եւ ո՛րքան երկար, ասում է Աստարհաղղօնը:

— Ի՞նչպէս թէ երկար, պատասխանում է ալեւորը: Իու հէնց նոր ընկղմեցիր գլուխդ և իսկոյն կրկին դուրս հանեցիր այն. տեսնո՞ւմ ես, դեռ թասի բոլոր ջուրը չեմ ածել: Այժմ հասկացա՛ր բոլորը:

Աստարհաղղօնը ոչինչ չէ պատասխանում և միայն սարսափած նայում է ծերունուն:

— Արդեօ՞ք դու այժմ հասկացար, շարունակում է ալեւորը, որ Լայիլիէն՝ — այդ դու ես և այն զօրականները, որոնց դու մահու դատապարտեցիր, դարձեալ դու ես: Եւ

ո՛չ միայն զօրականները, ա՛յլ և այն գազանները, որոնց դու որսում էիր և լափում քո խնձոյքներին, դարձեալ դու էիր: Իու կարծում էիր, որ կեանքը միայն քո մէջն է, բայց ես վերցրի աչքերիցդ խաբուսիկ քօղը և դու տեսար, որ ուրիշներին չարութիւն անելով՝ դու միայն քեզ էիր չարիք նիւթում: Կեանքը ամենքի մէջ մէկ է և դու քեզնով ներկայացնում ես այդ մէկ կեանքի միայն մի մասը: Եւ կեանքի այդ քո մասը կարող ես բարւոքել կամ վատացնել, աւելացնել կամ նւազացնել: Կեանքդ բարւոքելը կարող ես միայն նրանով, որ կը խորտակես այն սահմանները, որոնք անջատում են կեանքդ ուրիշ էակների կեանքից. ուրիշ արարածներին էլ կը համարես այնպէս, ինչպէս քո անձդ և կը սիրես նրանց: Իսկ ուրիշ արարածների կեանքը ոչնչացնելը քո ձեռքին չէ: Ի՞նչ ձեռքով սպանած արարածների կեանքը չբացաւ աչքիցդ, բայց չը ոչնչացաւ: Իու մտածում էիր երկարացնել կեանքդ և կարճել ուրիշներինը, բայց դու այդ չես կարող անել: Կեանքը՝ մի ակնթարթ է և կեանքը՝ հազարաւոր տարիներ. և քո կեանքը, և աշխարհիս բոլոր տեսանելի և անտեսանելի արարածների կեանքը հաւասար են: Կեանքը ոչնչացնել և փոփոխել չէ կարելի, որովհետեւ նա միայն մէկ է: Մնացածները մեզ միայն թրւում են:

Այս ասելով՝ ալեւորն աներևութացաւ:

Հետևեալ օրը Աստարհաղղօն արքան հրամայեց արձակել Լայիլիէին և բոլոր զերիններին և դադարեցնել մահւան պատիժները:

Երբորդ օրը նա կանչեց իւր Աշուրբանիպալ որդուն և յանձնեց նրան իւր թագաւորութիւնը, իսկ ինքը նախ

առանձնացաւ անապատը, միտք անելով այն բաների մասին, ինչ որ իմացաւ: Իսկ այնուհետեւ նա թափառականի նման սկսեց ման գալ զիւղերն ու քաղաքները, քարոզելով մարդկանց, որ կեանքը մէկ է, և որ մարդիկ միայն իրանց են չարիք հասցնում, երբ կամենում են ուրիշներին չարիք պատճառել:

II

Ե Ր Ե Ք Հ Ա Ր Յ

Մի անգամ թագաւորը միտք էր անում, որ եթէ ինքը զիտենար միշտ ամեն մի գործի ժամանակը, զիտենար նա՛ւ, թէ ինչպիսի մարդկանց հետ պէ՛տք է բան բռնել և ո՛ւմ հետ և զլխաւորը, իմանար միշտ, թէ գործերից ո՞րն է ամենից կարեւորը, այն ժամանակ ամեն բան կը յաջողէր նրան: Եւ այսպէս միտք անելով՝ թագաւորը յայտնեց իւր բոլոր հպատակներին, որ ինքը մեծ պարգև կը տայ այն մարդուն, որը կը սովորեցնի իրան, թէ ինչպէս զիտենալ ամեն գործի իսկական ժամանակը, ինչպէս իմանալ թէ ո՞ր մարդիկն են ամենից պէտքականը, նա՛ւ ճիշտ զիտենալ, թէ գործերից ո՞րն է ամենակարեւորը:

Գալիս էին թագաւորի մօտ գիտնական մարդիկ և կերպ կերպ պատասխաններ տալիս նրա հարցերին:

Աւաջին հարցին ոմանք այսպէս էին պատասխանում, թէ ամեն մի գործի իսկական ժամանակն իմանալու

համար պէ՛տք է առաջուց կազմել օրւայ, ամսւայ, տարւայ ցուցակը և ճշտութեամբ հետեւել նշանակած կարգին: Միմիայն այդպիսով, ասում էին նրանք, — ամեն գործ իւր ժամանակին կը շինուի: Ոմանք ասում էին, թէ կարելի չէ առաջուց որոշել, թէ ո՞ր գործը երբ պէ՛տք է շինել և չը պէ՛տք է ունայն զւարճութիւններով զբաղել, այլ պէ՛տք է ուշադիր լինել այն բանին, ինչ որ պատահում է և ժամանակին անել այն, ինչ պահանջուում է: Ոմանք ասում էին, որ ո՞րքան էլ ուշադիր լինէր թագաւորը դէպքերին, այնուամենայնիւ մի մարդու համար անհնարին է միշտ ճշտութեամբ վճռել, ինչ ժամանակ ինչ գործ պէ՛տք է կատարել, այլ պէ՛տք է ունենալ իմաստուն մարդկանց ժողով և խորհուրդ անելով վճռել՝ ինչ գործ ե՛րբ պէ՛տք է կատարել: Ոմանք էլ ասում էին, որ այնպիսի գործեր էլ լինում են, երբ միջոց չէ լինում խորհրդականներին հարցնելու, այլ պէ՛տք է իսկոյն վճռուել, ժամանակ է արդեօք գործն սկսելու թէ ոչ: Իսկ այդ զիտենալու համար առաջուց պէ՛տք է իմանալ, թէ ի՛նչ կը պատահի: Իսկ այդ բանը միայն մոգերը կարող են իմանալ: Ապա ուրեմն, իւրաքանչիւր գործի իսկական ժամանակը զիտենալու համար, պէ՛տք է մոգերին զիմել:

Այսպիսի տարբեր պատասխաններ էին տալիս և երկրորդ հարցին: Ոմանք ասում էին, որ թագաւորի ամենապէտքական մարդիկը՝ — նրա օգնական կառավարիչներն են, ոմանք ասում էին, որ թագաւորի ամենապէտքական մարդիկը՝ — քուրմերն են, ոմանք թէ թագաւորի ամենահարկաւոր մարդիկը՝ — բժիշկներն են, ոմանք թէ թագաւորի ամենից աւելի պէտքական մարդիկը՝ — զօրականներն են:

Իսկ գալով երրորդ հարցին թէ՛ որ գործն ամենից կարեւորն է, ոմանք պատասխանում էին, թէ աշխարհիս

վրայ ամենակարևոր գործը՝—զիտուլթիւններն են, ոմանք թէ ամենակարևոր գործը՝—զինւորական արևեստն է, ոմանք էլ թէ բոլորից կարևորագոյնը՝—աստուածապաշտուլթիւնն է:

Տւած պատասխանները բոլորն էլ իրարից տարբեր էին, ուստի և թագաւորը նրանցից ո՛չ մէկի հետ չը համաձայնեց և ո՛չ ոքի էլ չը պարգևատրեց: Իսկ իր հարցերի ամենաճիշտ պատասխանն ստանալու համար նա որոշեց դիմել մի ճգնաւորի, որի իմաստութեան մեծ համբաւը ամեն տեղ տարածւել էր:

Ճգնաւորն ապրում էր անտառում, ո՛չ մի տեղ չէր գընում և ընդունում էր միայն հասարակ մարդկանց: Ուստի և թագաւորը հազաւ հասարակ շոր և իւր զինակիրներով դեռ ճգնաւորի խուցը չը հասած՝ ցած իջաւ ձիուց և միայնակ զնաց ձօռը:

Երբ թագաւորը ձօռեցաւ նրան, ճգնաւորն իր խրճ-թի առաջ ածունէր էր փորում: Տեսնելով թագաւորին նա ողջունեց նրան և իսկոյն նորից շարունակեց փորելը: Ճգնաւորը նիհար և թոյլ մարդ էր, և բահով հողը բրելիս ու փոքրիկ հողի կտորներ շուռ տալիս, դժւարութեամբ էր շունչ առնում:

Թագաւորը ձօռեցաւ նրան և ասաց՝—

—Ես եկայ ձօռդ, իմաստուն ճգնաւոր, խնդրելու պատասխանել իմ երեք հարցիս՝—Ո՞ր ժամանակը պէտք է միտը պահել եւ չանցկացնել, որպէս զի յետոյ չը զրոջաս: Ի՞նչ տեսակ մարդիկ ամենահարկատրն են, ապա ուրեմն եւ ի՞նչ տեսակ մարդկանց հետ պէ՛տք է աւելի գործ ունենալ եւ ինչպիսիսիների հետ ոչ: Եւ ո՞ր գործերն աւելի կարեւոր են, ուստի եւ ո՞ր գործը միաներից առաջ պէտք է կատարել:

Ճգնաւորը լսեց թագաւորի ասածները, բայց ոչինչ չը

պատասխանեց, այլ ձեռքի մէջ թքեց և նորից սկսեց փորել զեփինը:

—Դու յոգնեցար, ասաց թագաւորը, տո՛ւր ինձ բահը, ես քօ փոխարէնը փօքր ինչ կաշխատեմ:

—Շնորհակալ եմ, ասաց ճգնաւորը և բահը տալով, նստեց զեփինը:

Երկու ածու փորելով, թագաւորը կանգ առաւ և կրկնեց իր հարցը: Ճգնաւորը ոչինչ չը պատասխանեց, այլ օտքի ելնելով՝ ձեռքը բահին մեկնեց՝—

—Այժմ դու հանգստացիր, բահն ինձ տուր... ասաց նա:

Բայց թագաւորը բահը չը տւեց և շարունակում էր փորել: Անցաւ մէկ ժամ, երկու ժամ, արեւն արդէն մայր էր մտնում և թագաւորը բահը դրեց զեփինն ու ասաց՝—

—Ես եկայ ձօռդ, իմաստուն մարդ, իմ հարցերիս պատասխանն ստանալու համար: Եթէ չես կարող պատասխանել, հէնց այդպէս էլ առա, ես տուն կը դառնամ:

—Ահա տե՛ս, ով որ վազում է մեր կողմը, ասաց ճգնաւորը: Տեսնե՛ք այդ ո՛վ է:

Թագաւորը յետ նայեց և տեսաւ, որ անտառից ձիշտ որ վազում էր մի միրուքաւոր մարդ: Այս մարդը՝ ձեռքերով բռնած ունէր փորը, ձեռքերի տակից արիւն էր հոսում: Թագաւորին ձօռենալով՝ միրուքաւոր մարդը զեփին ընկաւ և աչքերը չռելով, մնաց անշարժ և միայն թոյլ կերպով տնքում էր:

Թագաւորը ճգնաւորի հետ միասին հանեց մարդու շորերը: Նրա փորի վրայ մի մեծ վէրք կար: Թագաւորը ինչքան կարողացաւ, լաց վէրքը և իւր թաշկինակով ու ճգնաւորի երեսաբրիչով կապեց այն: Բայց արիւնը չէր կտրւում և թագաւորը մի քանի անգամ յետ էր անում տաք արիւնով թրջւած փաթթանը և նորից լւանում ու կապում էր վէրքը:

Երբ արիւնը կտրւեց, վիրաւորեալը ուշքի եկաւ և ջուր խնդրեց: Թագաւորը բերեց սառը ջուր խմեցրեց վիրաւորեալին:

Այն ինչ արեւն արդէն մայր մտաւ և հով ընկաւ: Թագաւորը ձգնաւորի օգնութեամբ ներս տարաւ վիրաւորեալին խուցը և պառկացրեց մահճակալի վրայ: Այդտեղ վիրաւորեալը աչքը խփեց և հանգստացաւ: Իսկ թագաւորն այնքան յոգնել էր մանդալուց ու աշխատանքից, որ կուշ եկաւ դռան շէմքին, քունը տարաւ և այնպէս խորը քնով քնեց, որ ամառնային ամբողջ կարճ գիշերը քնած էլ մնաց: Երբ առաւօտը զարթնեց, երկար միջոց չէր կարողանում հասկանալ թէ ո՛ւր է ինքը և ո՛վ է այն տարօրինակ միջուկաւոր մարդը, որ պառկած է մահճակալի վրայ և շեշտակի նայում է նրան շողշողուն աչքերով:

—Ների՛ր ինձ, ասաց միջուկաւոր մարդը թոյլ ձայնով, երբ տեսաւ որ թագաւորը զարթնեց և նայում է իրան:

—Ես քեզ չեմ ճանաչում, ուստի և քեզ ներելու ոչինչ չունեմ, ասաց թագաւորը:

—Դու ինձ չես ճանաչում, բայց ես քեզ ճանաչում եմ: Ես քո այն թշնամին եմ, որը երդւել էր վրէժ առնել քեզանից եղբօրը գլխատելու և կալածները յափշտակելու համար: Ես գիտէի, որ դու միայնակ եկար ճրգնաւորի մօտ և որոշեցի սպանել քեզ վերադարձիդ: Օրը մթնեց, բայց դու չերկացիր: Այնժամանակ դուրս ելայ թագաւոր տեանս տեղից, որ իմանալ ի՞նչ եղար դու և այդ միջոցին պատահեցի թիկնապահներիդ, որոնք ճանաչեցին ինձ և վիրաւորեցին: Ես փախայ նրանցից: Բայց արիւնաքամ լինելով ես կը մեռնէի, եթէ դու չը կապէիր վէրքս: Ես կամենում էի քեզ սպանել, բայց դու ազատեցիր կեանքս: Այժմ ես եթէ կենդանի մնամ և դու էլ ցանկանաս այդ,

իրբև ամենամանկանէր ստրուկ կը ծառայեմ քեզ, և նոյնը կը պատւիրեմ և իմ որդիներին: Ների՛ր ինձ:

Թագաւորը շատ ուրախ էր, որ նրան յաջողեց այդպէս զիւրութեամբ հաշտուել իւր թշնամու հետ և ոչ միայն ներեց նրան, այլ և խոստացաւ յետ տալ նրանից խըլած կալածքը. և բայց այդ ուղարկել նրան բժշկելու և խնամելու համար իւր բժշկին ու սպասաւորներին:

Հրաժեշտ տալով վիրաւորեալին, թագաւորը դուրս եկաւ պառչաւոր և որոնում էր ձգնաւորին: Նախ քան կը վերադարձար պալատը, նա վերջին անգամ ուզում էր խընդրել նրանից պատասխանել իր հարցերին: ձգնաւորը դուռանն էր և ծունկ չոզած երեկւան փորած ածուների առաջ, ցանում էր բանջարեղէնի սերմեր:

Թագաւորը մօտեցաւ նրան և ասաց—

—Վերջին անգամ, իմաստուն մարդ, խնդրում եմ պատասխանել իմ հարցերին:

—Բայց չէ՞ որ դու արդէն պատասխանն ստացար. ասաց ձգնաւորը, կկա՞ծ իւր նիհար ազդրների վրայ և վարից—վեր նայելով իւր առջև կանգնած թագաւորին:

—Ի՛նչպէս թէ պատասխանն ստացայ՝, ասաց թագաւորը:

—Ի հարկէ, ասաց ձգնաւորը: Եթէ դու երեկ չը խնայէիր տկարութեանս, իմ փոխարէնը չը փորէիր այս ածուները և միայնակ յետ դառնայիր,—այդ կտրի՞՞ն անշուշտ կը յարձակէր վրադ և դու կը զղջայիր, որ չը մնացիր մօտս: Ապա ուրեմն հէնց իսկական ժամանակն այն էր, երբ դու փորում էիր ածուները և ես ամենից կարեւոր մարդն էի և ամենից կարեւոր դործն էր ինձ բարութիւն անելը: Իսկ ապա, երբ նա մեզ մօտ վազեց, ամենախիսկական ժամանակն էր՝ երբ դու խնամում էիր նը-

րան, որովհետև եթէ դու չըկապէիր նրա վերքը, նա կը մեռնէր, առանց քեզ հետ հաշտուելու:

Ապա ուրեմն և ամենակարևոր մարդը նա՛ էր—իսկ այն, ինչ դու արիր, ամենից կարևոր ժամանակը—իսկոյնն է. իսկ ամենից կարևորն է այն պատճառաւ, որ այդ ժամին կենք մենք իշխում մեզ վրայ. իսկ ամենից կարևոր մարդը նա էր, որին իսկոյն հանդիպեցիր, որովհետև ոչ ոք չէ կարող իմանալ, թէ կարո՞ղ է արդեօք դարձեալ մի ուրիշի հետ գործ ունենալ թէ ոչ. իսկ ամենից կարևոր գործը մարդուն բարու թիւն անելն է, որովհետև մի միայն այդ բանի համար է ուղարկւած մարդս աշխարհ:

Լու Տալսոյ

Նաննայա-Պօլեանտ.

19 օգոստոսի 1903 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0329165

14043

Վ Ա Ճ Ա Ռ Ի Ռ Ի Մ Ե Ն

ՄԱՅՐԸ (Վ. Հիւգօի) և ուրիշ գրողներ. թ. Գ. Բ. գինն է 7 կ.
ԺԱՀՐՈՏ ՎԷՐՔԵՐ Նշատրի. 15 կ.

Գ Ի Ն Ն Է 5 Կ Ո Պ .

Գուժարով գնողներին բաւարար զեղջ:

Գրքերի պահեստը Գ. Բարուրեանցի մօտ՝

Тиф. н.с. ~~Возвращены~~ Окроканская,
Геворку Бабурянцу.

Տ Պ Ա Գ Ր Ի Ռ Ի Մ Ե Ն

ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ, կազմեց—Նշատր. 20 կ.
ԲԱՐԻ ԶԱԻԱԿՆԵՐ, (Ճապոնական հէքիաթ) թարգ. Գ. Բ. 3 կ.
СРАЖЕШНАЯ СУДЬБОЮ, соч. А. Агароняна 5 կ.